ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՃՅՈՒՂԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ПРОФСОЮЗ РАБОТНИКОВ ГОСУЧРЕЖДЕНИЙ АРМЕНИИ

UNION OF STATE, LOCAL GOVERNMENT AND PUBLIC SERVICE EMPLOYEES OF ARMENIA

«16» հունվարի 2025թ.
N 06-01

ՀՀ Վարչապետ
Նիկոլ Փաշինյանին

Հարգելի պարոն վարչապետ

Վարչապետի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության կողմից հունվարի 14-ին ի պատասխան մեր 09-01-2025թ N02-01 հարցմանն ուղարկված գրության համաձայն՝ Վարչապետի աշխատակազմում աշխատողներին տեղափոխող ծառայողական ավտոբուսները կրճատվել են: Դրանք կրճատվել են նաև այլ գերատեսչություններում, որտեղ դրանք գործածվում էին:

Խնդրում ենք պարզաբանել, ի՞նչ նպատակով է տեղի ունեցել կրճատումը, քանի որ դա հանգեցրել է աշխատողների սոցիալական-տնտեսական վիճակի վատթարացման: Աշխատակիցները ստիպված են այսուհետ երթևեկել կամ քաղաքային տրանսպորտով, կամ տաքսիով: Քաղաքային տրանսպորտային համակարգը դեռ բարեփոխման փուլում է և ներկայումս գերծանրաբեռնված է, ինչը դժվարացնում է դրանով երթևեկելը:

Աշխատողների մի մասը աշխատանքից չուշանալու և աշխատանքի արժանապատիվ ձևով հասնելու համար օգտվում են տաքսիներից, որն անհամեմատ ավելի թանկ է:

Ավելին, ունենք տեղեկություն, որ վերը նշվածի հետևանքով, աշխատողները կազմակերպվում են, մոտ 20-հոգանոց խմբեր են կազմում, պայմանավորվածություն են ձեռք բերում մասնավոր ավտոբուսների վարորդների հետ և, օրական յուրաքանչյուրը 600 դրամի դիմաց, կազմակերպում իրենց տեղափոխումն աշխատավայր և տուն: Այս երևույթի հետևանքով, նման վարորդներն ամսական շուրջ 260 000 դրամի չգրանցված եկամուտներ են ունենալու:

Վերը նշված գործողությունները, բացի անօրինական լինելուց, տապալում են կառավարության կողմից որդեգրած կանխիկի և ստվերի կրճատման քաղաքականությունը, ինչպես նաև հակասում են քաղաքային իշխանության կողմից որդեգրած քաղաքը բեռնաթափելու քաղաքականությանը:

Միաժամանակ, 2025 և 2026 թվականներին շարունակում է աճել գույքահարկը: Երևանում թանկացել է նաև աղբահանության վճարը: Համաձայն Երևանի ավագանու

Հասցե՝ 0010, ք. Երևան
Վ. Սարգսյան 26/3, 501 ս.

Address: 26/3 V. Sargsyan st,
Office 501, Yerevan, 0010

Адрес: 0010, г. Ереван
ул. В. Саргсяна 26/3, офис 501

Tel: +37410580582 URL: www.arhmiutyun.org Email: profrosgu@gmail.com Facebook: facebook.com/arhmiut

որոշման՝ փետրվարից առնվազն երկու անգամ թանկանալու է քաղաքային տրանսպորտի ուղեվարձը:

Այդպիսով, աշխատողների փաստացի տնօրինվող եկամուտները զգալի նվազում է, այդ թվում՝ ծառայողական ավտոբուսները վերացնելու որոշման պատճառով:

Կարծում ենք, որ ճիշտ կլինի այդ որոշումը չեղարկել:

Միաժամանակ, նման սոցիալական պայմանները հանգեցնում են նրան, որ պետական և համայնքային ծառայողները ստիպված են որոնել լրացուցիչ եկամտի աղբյուրներ՝ իրենց և իրենց ընտանիքների կենսապահովման համար, չնայած որ, համաձայն օրենսդրության, նրանց չի թույլատրվում զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից: Ստեղծված պայմաններում, սակայն, լրացուցիչ աշխատանք կատարելը դարձել է անհրաժեշտություն միջին և ցածր օղակի հանրային ծառայողների համար:

Որպես պետական ու համայնքային աշխատողներին միավորող ճյուղային հանրապետական արհմիություն՝ առաջարկում ենք վերանայել օրենսդրական կարգավորումները՝ թույլ տալով պետական ու համայնքային ծառայողներին աշխատանքային ժամերից դուրս կատարել վարձատրվող այնպիսի աշխատանք, որը չի հակասի նրանց պաշտոնեական պարտականություններին և չի առաջացնի շահերի բախում: Նման կարգավորումներ առկա են միջազգային պրակտիկայում:

Հարգանքով՝

Հայաստանի պետհիմնարկների, ՏԻՄ-երի

աշխատողների ճյուղային արհմիության

նախագահ հաստատված է էլ ստորագրությամբ **Ա. Ասատրյան**